

ԹԵՄԱԿԱՆ ԿՑԱՆՔ

Կ. ՊՈՂՍԻ ԱՄԵԽԱՊԱՏԻՎ Տ. ԾՆՈՐՀՔ
ՊԱՏՐԻԱՔ ԳԱԼՈՒՍՅԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ
ՆԵՐՔԻՆ ԳԱՎԱՌՆԵՐ

Թուրքիայի հայոց Պատրիարքի հանգամանքով, Ամենապատիվ Տ. Ծնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը երկու անգամ՝ 1969 և 1977 թվականներին, հովանապետական այցելություններ է տվել Թուրքիայի ներքին զավարների մեջ ցրված իր հոտին: Այսուհետև քաղաքական անրարինապաստ պայմանների հետևանքով հովանապետական այցելություններն ընդհատվել են:

Սակայն բարեդեպ կուգաղիպությամբ «Ագեղ Թուր» ճամփորդական կազմակերպությունը ծրագրել էր տուրիստական շրջագայություն կատարել երկրի կենտրոնական, արևելյան և սևովյան շրջաններ: Աղյօթից օգովելով, Ամենապատիվ Սրբազն Պատրիարքը մաս կազմեց այդ շրջագայությանը:

Սույն թվականի օգոստոսի 26-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 8.30-ին, իրեն ուղեկից ունենալով Պատրիարքարանի դիվանապետ Տ. Մեսրոպ վարդապետ Մութաֆյանը, Մայր եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Մյուսոն քահանա Արքայանը և դոկտ. Կարապետ Արմանը՝ որպես անձնական խորհրդական, Սրբազն Պատրիարք Հայրը փոքրիկ ավտորուտվ դուրս եկավ հովանապետական շրջագայության: Խակ «Ագեղ Թուր» ճամփորդական կազմակերպությունը երկու մեծ ավտոբուս էր հատկացրել 90 հոգուց բաղկացած հայ ճամփորդներին:

Անցնելով Խվմիթ (նախկին Նիկողիմիա), Աստաբար, Պոլու, Անկարա և Քըրշեհիր քաղաքները, գիշերվա ժամը 22.30-ին խումբը հասավ Կեսարիա, որտեղ պատրիարքական պատվիրակությանը դիմավորեց տեղի հայոց հոգևոր հովիվ Տ. Վարագ քահանա Պելլերյանը:

Օգոստոսի 27-ին, երեքշաբթի օրը, Կեսարիայի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցւմ և պատարագ մատուցեց և քարոզեց Սրբազն Պատրիարք Հայրը՝ իրեն առընթերակա ունենալով երկու քահանա հայրեր:

Ս. պատարագին ներկա էին հոգևոր դասը, տեղի հայությունը և Ճամփորդները: Երգեցիկ խումբը, որ կազմված էր արարողությանը ներկա հայատացյալ ժողովրդից, դեմքավարում էր Տ. Մեսրոպ վարդապետ Մութաֆյանը:

Հավարտ պատարագի տված իր քարոզի մեջ Սրբազն Պատրիարք Հայ-

որ շեշտեց այն կարևոր դերը, որ կատարում է Կեսարիայի Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցին, քանի որ մերձակա շրջաններում բնակվող բոլոր հայերը կապված են այս Եկեղեցուն՝ հայկական այլ Եկեղեցի չինելու պատճառով։

Սրբազն Պատրիարք Հայրը, ողջ հոգևոր դասի հետ միասին, այցելեց տեղի հայոց գերեզմանատուն և մասնավոր հոգեհանգիստ կատարեց։



Կ. Պոլսի հայոց Ամենապատիվ Տ. Շնորհի Պատրիարք Գալյուստյան

Օգոստոսի 28-ին, չորեքշաբթի օրը, ձամփորդական խումբը այցելեց Հարբուր Խարբերդ : :

Օգոստոսի 29-ին, հինգշաբթի օրը, առավոտյան, Ելազղի տուրիանիների Եկեղեցում և. պատարագ մատուցեց և քարոզեց Ամենապատիվ Սրբազն Հայրը։ Ներկա էին տեղի հայ ընտանիքների անդամները։

Հավարտ և. պատարագի տեղի գերեզմանատանը կատարվեց հոգեհանգիստ՝ «վասն համօրէն ննջեցելոց»։

Նույն օրը, ժամը 10.30-ին, Սրբազն Պատրիարք Հայրը իր շքախմբով

այցելեց Մալաթիա և տեղի հայոց գերեզմանատանը կատարեց հոգեհանգիստ՝ տեղում հայկական եկեղեցի չինելու պատճառով:

Օգոստոսի 30-ին, ուրբաթ օրը, Ամենապատիվ Սրբազն Հայրը իր շքամբով այցելեց Դիարբեքիր և այցելություններ տվեց տեղի բարձրաստիճան դեկազր անձանց:

Այսուհետև այցելեց տեղի հայոց գերեզմանատուն և Ս. Կիրակոս եկեղեցի, որը խիստ անխնամ վիճակում է գտնվում և կարիք ունի վերանորոգման:

Օգոստոսի 31-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Ամենապատիվ Սրբազն Հայրը իր շքախմբով այցելեց Տերիք գյուղաքաղաք, որտեղ կա հայ հասմանք և հայկական եկեղեցի, որը տեղական թերթերում թյուրիմացաբար ներկայացված է իբրև սուրբանիների եկեղեցի, որ կոչվում է Ս. Գևորգ:

Ամենապատիվ Սրբազն Հայրը, իր շքախմբի հետ միասին, «Հրաշափառ»-ով մուտք գործեց եկեղեցի, և կարծ ժամերգությունից հետո ս. պատրագ մատուցեց Տ. Մուռոն քահանա Ալվազանը, որից հետո Սրբազն Պատրիարք Հայրը հավուր պատշաճի քարով խոսեց:

Նույն օրը, կեսօրվա ժամը 14-ին, Սրբազն Պատրիարք Հայրը իր շքամբով դուրս եկավ Տերիքից և, անցնելով Մարտին քաղաքը, հասավ նրանից խմբով դուրս եկավ Տերիքավարան կոչված սուրբանիների հնադարյան հոչակավոր վանք: Այստեղ Սրբազն Պատրիարքին դիմավորեց վանքի ողջ բնակչությունը՝ վանականներով և ժառանգավոր դպիրներով: Կատարվեցին ասորական և հայկական երգեցողություններ և աղոթքներ:

Այսուհետև Ամենապատիվ Սրբազն Պատրիարք Հայրը ներկաներին ուղղեց իր հայրական խոսքը՝ հայտնելով իր շնորհակալություններն ու օրինությունները այս խանդավառ ընդունելության համար՝ շնորհելով երկու՝ հայ և սուրբանի եկեղեցիների դարավոր եղբայրությունը և դավանակցությունը:

Նույն օրը, ժամը 19.30-ին, Ամենապատիվ Պատրիարք Սրբազն Հայրը իր շքախմբով ուղևորվեց Մար Կապրիել ասորական վանք:

Ըուրջ կես ժամ տևող սրտագին հյուրասիրությունից հետո, Սրբազն Պատրիարք Հայրը իր շքախմբով վերադարձավ Դիարբեքիր:

Սեպտեմբերի 1-ին, կիրակի օրը, Ամենապատիվ Սրբազն Պատրիարք Հայրը տեղի հայոց Ս. Կիրակոս եկեղեցում ս. պատարագ մատուցեց, որից հետո բոլոր ներկաները մոտեցան պատարագիչ Սրբազն Հորը և ստացան Ս. Հաղորդություն:

Նույն օրը, կեսօրից հետո, Ամենապատիվ Սրբազն Պատրիարք Հայրը իր շքախմբով ուղևորվեց Վան՝ անցնելով Սիլուան, Բիթլիս, Դատվան, Կևաշ և Արտամետ քաղաքները, ու տեղ հասավ երեկոյան ժամը 22-ին և իշխանեց «Ուրարտու» հյուրանոցում:

Սեպտեմբերի 2-ին, երկուշբթի օրը, առավոտյան, Ամենապատիվ Սրբազն Պատրիարք Հայրը, ուղեկցությամբ Տ. Մեսրոպ վարդապետ Մուրաֆյանի և դոկտ. Կարապետ Արմանի, քաղաքավարական այցելություն տվեց Վանի նահանգապետին:

Ապա փոքր խմբով այցելեց Վարագա վանք: Ժամանակին այստեղ եղել է ծաղկյալ վանական կյանք՝ իր յոթ եկեղեցիներով. Ս. Աստվածածին, Ս. Գևորգ, Ս. Նշան, Ս. Խաչ, Ս. Սիոն, Ս. Հովհաննես և Ս. Սոֆիա: Այժմ նշված եկեղեցիները մասամբ կամ ամբողջապես ավերակ վիճակում են:

Սեպտեմբերի 3-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 9.30-ին, Ամենապատիվ Պատրիարք Սրբազն Հայրը իր շքախմբով, երեքովեսժամա նավարկությունից հետո, այցելեց Կտուց կղզի, որտեղ այցելուների ատշև իր վե-

հությամբ պարզվեց գրեթե անաղարտ մնացած սպիտակ գմբեթով Ս. Կարապետ եկեղեցին:

Այնուհետև խումբը նույն նավով այցելեց Վանա ծովի հարավային մասում գտնվող Առտեր կղզի, որի բրի գագաթին դեռևս պահպանվում է անշուրք և շատ փոքր մի մատուռ՝ կառուցված բնական անտաշ քարերով:

Ժամը 17.30-ին Ամենապատիվ Սրբազն Պատրիարք Հայրը իր շքախմբով այցելեց Աղթամար կղզի, որը նշանավոր է իր հոչակավոր Ս. Խաչ տաճարով:

Արևն արդեն վաղուց մայր էր մտել, երբ Ամենապատիվ Սրբազն Պատրիարք Հայրը իր շքախմբով վերադարձավ Վան՝ որվա շրջագայությունից ստացած անմոռանալի տպավորություններով ին հոգով:

Սեպտեմբերի 4-ին, չորեքշաբթի օրը, վաղ առավոտյան, Սրբազն Պատրիարք Հայրը իր շքախմբով եղավ Արճեղում: Այստեղ թեթևակի նախաճաշելուց հետո, խումբը շարունակեց իր ուղերթը դեպի Կարս և, տեղի Առաքելոց եկեղեցին դիտելուց հետո, կեսգիշերին, հասավ երկրում:

Սեպտեմբերի 5-ին, իինգշաբթի օրը, երեկոյան, պետական մարմինների խոչընդոտներն ու արգելվները հարթելուց հետո, Սրբազն Պատրիարք Հայրը իր շքախմբով այցելեց պատմական Անիի ավերակներ՝ Ս. Փրկիչ, Ս. Գրիգոր Լուսավորիչ և այլ եկեղեցիներ: Խմբի վրա ամենամեծ տպավորությունը թողեց Անիի Մայր տաճարը:

Արդեն ուշ երեկո էր, երբ Ամենապատիվ Սրբազն Պատրիարք Հայրն ու իր շքախմբի անդամները հրաժեշտ տվեցին Անիին՝ իրենց հիշողության մեջ անշնչելիորեն դաշված տանելով նրա պատկերը և անցյալի անմոռանալի փառքը:

Սեպտեմբերի 6-ին, ուրբաթ օրը, վերադարձի ճանապարհին, Ամենապատիվ Սրբազն Պատրիարք Հայրը իր ուղեկիցներով եղավ Երկրումում և ապա ուղղություն վերցրեց դեպի Տիրապիսոն: Ճանապարհին եղավ հայկական և հունական պատմական վանքերում ու եկեղեցիներում և, քանչորսժամիա ճամփորդությունից հետո, իջևանեց Սամսոնում:

Սեպտեմբերի 7-ին, շաբաթ օրը, դուրս գալով Սամսոնից, Սրբազն Պատրիարք Հայրը իր շքախմբով ապահովաբար հասավ Հայոց Պատրիարքարան:

ՌՈՒՄԻՒՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

**ՀԱՅՈՑ ՍՈՒՐԵՅԱՆԻ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ
ՀԱՅՈՑ ՄԻԱՑՅԱԼ ԹԵՏԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴ
ԳԵՐԱՉՆՈՐՀ Տ. ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՒՍԿՈՊՈՍ
ՄԱՐՏԻԿԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ
ՊԱՏԾՈՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԻՆ**

Վորությամբ և շուրջով տոնելու նշված հոբելյանը: Թեմական խորհուրդը որոշեց նաև, որ սույն հոբելյանը, բացի Բովսարենատից, նշվի նաև Կոնստանցա և Սուչավա քաղաքներում ընդառաջելով տեղի հայ հավատացյալ ժողովորդի ցանկությանը:

ԿՈՆՍՏԱՆՏՈՎԱՅՈՒՄ

Իբրև կատարում այս որոշման, սույն թվականի հունիսի 28-ին Կոնստանցայի հայոց եկեղեցում տեղի ունեցավ հանդիսավոր ս. պատարագ: Պատարագին էր Տ. Կոմիտաս արեղա Հովհաննեանը:

Ռումինիայի հայոց թեմական խորհուրդը, ստանալով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրինության և գնահատանքի սըրբատառ կոնդակը, առաջնորդ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկային առաջնորդական պաշտոնավարության 25-ամյակի առթիվ, իր արտակարգ ժողովում կազմեց մի հատուկ հանձնախումբ՝ առավել հանդիսա-



Գերաշնորհ S. Տիրույթ արքեպիսկոպոս Մարտիկան

Եկեղեցու բնմից S. Ավետիս քահանա Մանդայանը հանդիսավորապես ընթերցեց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը, որից հետո պատարագիչ հայր սուրբը խոսեց առաջնորդ սրբազն հոր կյանքի և քանիհնգ տարիների առաջնորդական գործունեության մասին:

Ս. պատարագի ավարտին պատարագիչ սրբազն հայրը խոսեց սրտաբուխ մի քարոզ:

Այսուհետև Ներկաներից շատերը հոգեբուխ մաղթանքներ ուղղեցին հոբեսար սըրբազնին:

Ապա Կոնստանցայի հայ համայնքը, ի պատիվ առաջնորդ սրբազն հոր, «Զինա» ճաշարանում տվեց ճաշկերույթ, որին Ներկան էին նաև մուս քաղաքների պատգամավորները, Ներկայացուցիչները և այլ հյուրներ:

Սուչավայում

Օգոստոսի 18-ին, Սուչավայի Հաճոյակատար U. Աստվածածին վանքի ուխտի օրը, տեղի հայոց եկեղեցում ս. պատարագ մատուցեց առաջնորդ սրբազն հայրը:

Ս. պատարագին Ներկան էին ինչպես տե-

ղի, այնպես էլ Ռումինիայի տարբեր քաղաքներից ու այլ երկրներից ժամանած հայ և օտարակազի հոգիատացավաների բազմություն: Պատարագի երգեցողությունը կատարեց Կոնստանցայի հայոց եկեղեցու երգչախոսություն՝ դեկանվարությամբ հոգևոր հովիվ S. Կոմիտաս աբեղա Հովհաննի:

Ս. պատարագի ընթացքում հանդիսավորությամբ ընթերցվեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը:

Ապա վանքի բակում տեղի ունեցավ միքր ճաշ՝ ի պատիվ առաջնորդ սրբազն հոր առաջնորդական պաշտոնավարության 25-ամյակի:

Բովարեստում

Օգոստոսի 25-ին Բովարեստի հայոց Ս. Հրեշտակապետաց եկեղեցում, ի ներկայության ոումին Կառավարության, կրոնից նախարարության ներկայացուցիչների, հյուրերի և հավատացյալների հոծ բավթության, ս. պատարագ մատուցեց հոգեշնորհ S. Զարեհ ծայրագույն վարդապետ Պարոնյանը:

Եկեղեցու բեմից Սուչավայի հայոց հոգեգոր հովիվ S. Արամայիս վարդապետ Շլուկյանը ընթերցեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը, որից հետո պատարագիչ հայր սուրբը խոսեց S. Տիրույթ արքեպիսկոպոս Մարտիկանի առաջնորդական գործունեության 25 տարիների մասին:

Ս. պատարագին իրենց մասնակցությունը բերեցին ոումին օպերայի մեներգիչներ Է. Թումաճանյանը և Դավիթ Հովհաննիսյանը: Խոկ եկեղեցու երգչախումբը, վաստակավոր խմբավար Կ. Հարությունյանի դեկանվարությամբ, պատարագից հետո ցուցադրեց արտակարգ մի նվազահանդես, որին նույնպես իրենց մասնակցությունը բերեցին նշված մեներգիչները:

Հավարտ ս. պատարագի առաջնորդարանի ընդունելությանց սրահում, ի ներկայության բարձրաստիճան պաշտոնական անձնափորությունների և բազմաթիվ հավատացյալների, պրոֆ., դոկտ. Գ. Բամպուրճյանը խոսեց առաջնորդ սրբազն հոր վերջին 25 տարիների արդյունավետ գործունեության մասին:

Ապա այս առթիվ նորվեց ճոխ Ճաշկերույթ, որին մասնակցեցին ավելի քան 250 անձեր:

Այս ուրախառիթ բոլոր միջոցառումները անմոռանալի պահեր շնորհեցին ոումինահայ գաղութին և Էլ ավելի սերտացրին կապը դեպի Հայաստանյաց Սոռքելական Ս. Եկեղեցին և Մայր Աթոռ Ս. Եջմիածինը:

ԼՈՒՐԵՐ ԿՈՆՍԱՆՑԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ

Կոնստանցա քաղաքը, Բուխարեստից հետո, Երկրորդ համայնքն է ռումինահայության, որտեղ բնակվում են շուրջ հազար հայեր: Այս համայնքի կանքի առաջնորդացին իր կարևոր նպաստն է բերում տեղի հայոց հոգնոր հովիկ Տ. Կոմիտաս արեղա Հովնանյանը:

Վերջերս Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմերի թեմակալ առաջնորդ գերաջնորդ Տ. Տիրայը արքեպիսկոպոս Մարտիկյանի ներկայությամբ կատարվեց տեղի հայոց եկեղեցու ներքին հարկի սրահի բացումը և այն կոչքեց Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան սրահ, որտեղ հայ երկանո պատասխներն ու երիտասարդները պիտի հետևեն հայոց լեպի դասընթացներին:

Այս տարի առաջնորդ սրբազն հայրը բազմաթիվ անգամներ եղավ Կոնստանցայի հայ համայնքում: Այսպես, Վարդանանց տոնի առջիվ սրբազն հայրը քարոզեց տեղի հայոց եկեղեցում մասնավորապես ծանրանալով Վարդանանց տոնի նշանակության և ներկա աշխարհի խաղաղության ու անվտանգության խնդրի վրա:

Իսկ հավարտ Ա. պատարագի եկեղեցուն կից սրահում տեղի ունեցավ հանդիսություն, որի ընթացքում կատարվեցին արտասանություններ և երգչախմբի ելույթներ:

«Հանդիսության ավարտից հետո տրվեց սիրո սեղան:

Առաջնորդ սրբազն հոր Երկրորդ այցելությունը տեղի ունեցավ Կոնստանցայի թաղական խորհրդի հրավերով՝ նախագահելու ապրիլի 24-ի սգդ հանդեսին և բանախոսելու երկու միլիոն հայ անմեղ նահատակների հիշատակին, որոնք վոր գնացին թուրք կառավարության կողմից կազմակերպված մեր դարի առաջին ցեղասպանությանը:

Սրբազն հոր Երրորդ այցելությունը կոնստանցահայությանը տեղի ունեցավ հունիս ամսին, որտեղ նախագահեց թաղական խորհրդի տարեկան հաշվետու ժողովին, որի ընթացքում և կատարվեց թաղական խորհրդի վերընտրություն:

* * *

Յաջ քաղաքի հայոց եկեղեցին կառուցվել է 1395 թվականին: Եկեղեցու կառուցման թվականը քաղաքի ամենահին փաստաթուղթըն է:

Վերջին Երկրաշարժի ժամանակ եկեղեցին խիստ վնասվել էր: Այս առջիվ Ռումինիայի հայոց թեմական խորհուրդը կոչ ուղղեց բո-

ր համայնքներին, որպեսի նյութական օժանդակություն ցուցաբերվի և վերանորոգվի պատմական այս հուշարձանը: Ն պատիվ ռումինահայությունը պետք է ասել, որ սույն կոչը բոլոր համայնքների կողմից ընդունվեց դրականորեն, և շուտով կալվածն եկեղեցու նորոգման աշխատանքները:

* * *

Վերջերս ռումինիայի գաղութը երկու անդամանական կորուստ ունեցով: Կյանքին ընդմիջու հրաժեշտ տվեցին՝ թեմական խորհրդի անդամ, հայտնի նկարիչ Զիկ Տամատյանը և թժկական գիտությունների դոկտոր, պրոֆ. Երվանդ Սերոբյանը: «Հանգուցյալ այս երկու նշանավոր անձնավորությունների մարմինները ընդմիջու իրենց հանգիստը գուան Բուխարեստի հայոց գերեզմանատանը: Այս տխուր առիթներով դամբանական խոսեցին՝ առաջնորդ սրբազն հայը, թեմական խորհրդի փոխնախազահ, պրոֆ., դոկտ. Գր. Բամպուճյանը, Տիգրան Տիգրագորյանը, «Նոր կանք» թերթի խմբագրության կողմից՝ Անդրանիկ Անտոնյանը, և ռումին արվեստաբաններ ու հայտնի բժիշկ-պրոֆեսորներ:

* * *

Անցյալ տարի, առաջնորդ սրբազն հոր ջանքերով, կրկին հայ գաղութին վերադարձվեց «Հայ մշակույթի տան» առաջին հարկը: «Հանդիսությունների սրահի նորոգությունից հետո այստեղ փոխադրվեցին եկեղեցական թանգարանի բոլոր իրերը: Պետական համապատասխան մարմինների որոշմամբ մինչև հիկոտեմբեր ամիսը ողջ շենքը պետք է վերադարձվի հայ համայնքին:

Վերանորոգվեց նաև առաջնորդարանի շենքը, և թանգարանի նախկին սրահը վերածվեց հանդիսավոր ընդունելությունների սրահի:

**ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ՀԱՅՈՑ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ
ԶԱՆԳԱԿԱՏԱՆ ԵՎ ՄԱՏՈԱՆ
ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ**

Մինչև 1868—1869 թվականները Բուխարեստի հայ համայնքը չուներ իր առանձին գերեզմանատունը: Այս քացը լրացրին Դանիել և Մարգարետա ամուսինները, որոնք այդ թվականներին գնեցին մի հողամաս և նվիրեցին տեղի հայ համայնքին:

Այսուհետև, 1927—1928 թվականներին, Գրիգոր և Մարգինե Մելիք-Ճապուրով ամուսինների նվիրատվությամբ կառուցվեց մի

մատուռ, նույն գերեզմանատան տարածքում, և անվանվեց այն Ս. Գրիգոր Լուսավորիչ:

Ավելի քան հարյուր տարիների ընթացքում բազմաթիվ անգամներ վերանորոգվել

րեի Պլպու Պարոնյանը (1891—1961) և արվեստի, գրականության, գիտության, մամուլի ու մշակույթի բնագավականի բազմաթիվ նշանավոր դեմքեր:



Բուխարեստի հայոց գերեզմանատան մուտք

և բարեկարգվել է հայոց գերեզմանատունը: Մի քանի անգամներ վերանորոգվել է նաև Ս. Գրիգոր Լուսավորիչ մատուռը: Թեմակալ առաջնորդ գերազնորի Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանի թելադրանքով հին զանգակատան ոճը փոխարինվել է հայկական ոճով՝ ըստ հայտնի նկարիչ Չիկ Տամայյանի:

Բուխարեստի հայոց գերեզմանատանը թաղված են այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպիսիք են հոգելուս առաջնորդ Հովսիկ արքեպիսկոպոս Զոհրապյանը (1871—1942), որը եղել է ժամանակակիցը և Ճեմարանական դասընկերը Կոմիտաս Վարդապետի, Գևորգ Զ և Խորեն Ա Մուրադբեկյան կաթողիկոսների: Այստեղ են թաղված նաև՝ իրավաբաններ Գրիգոր Պըյօսյանը, Յոան Պապիկյանը, բանասեր Հ. Ճ. Սիրունին (1890—1973), պրոֆ. Վլադ Բընըցեանուն (1900—1963), բանաստեղծ Եղվարդ Գոլյանձյանը (1880—1957), մանկավարժ Զա-

ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ 70-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՀԸ

1911 թվականին Բուխարեստի հայոց նախկին եկեղեցու հիմքի վրա կառուցվեց Ս. Հրեշտակապետաց առաջնորդանիստ եկեղեցին, որը օծվեց Նևոնդ արքեպիսկոպոս Դուրյանի կողմից 1915 թվականին:

Վերջին 25 տարիների ընթացքում թեմակալ առաջնորդ Տ. Տիրայր արքեպիսկոպոսի ջանքերով և եկեղեցական պատասխանատու մարմինների աջակցությամբ Ս. Հրեշտակապետաց եկեղեցին ենթարկվել է ներքին և արտաքին մասերի վերաշինության և որմնանկարների ու յուղանկարների լվացման:

Ս. Հրեշտակապետաց եկեղեցու օծման 70-ամյակի առիթով խորին երախտագիտություն այն անձանց հիշատակելի անվանը, որոնց ջանքերով ստեղծվել, վարգացել ու ծաղկում է ապրում եկեղեցին:

«Յիշատակն արդարոց օրինութեամբ եղիցի»:

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅՑ ԹԵՄՈՒՄ

Այս տարի լրացավ Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմերի թեմակալ առաջնորդ գերազնորդ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանի առաջնորդական պաշտոնավարության 25-ամյակը:

Այս առթիվ բուլղարահայ թեմական խորհրդը սեպտեմբերի 6-ին «Սոֆիա» հյուրանոցի ճաշասրահում պաշտոնական ճաշկերույթ տվեց, որին ներկա էին թեմական խորհրդի անդամները, եկեղեցական վարչությունների ատենապետները, բուլղարահայ թեմի հոգևոր դասը և «Երևան» Մշակութային Միության նախագահ պր. Տիրան Բարիքյանը:

Սույն հանդիսավոր միջոցառմանը ներկա էին նաև Բուլղար Օթողորքս Եկեղեցու Ս. Սինոդի գլխավոր քարտուղար Կելասի և պահսկոպոս, Բուլղարիայի արտաքին գործերի մինիստրության առջնորդ Կրոնական գործերի ներկայացուցիչ պր. Թողոր Արաշինը և շատ ուրիշներ:

Ճաշկերույթի սկզբին թեմական խորհրդի ատենապետ պր. Կարո Տեր-Մեսորոպյանն իր բացման խոսքում բարություն առաջնորդ սրբազն հոր կյանքի ուղին և Եկեղեցասեր ու ժողովրդանվեր ծառայությունը:

Այսուհետև Բուլղար Օթողորքս քույր Եկեղեցու պետ Նորին Սրբություն Մաքսիմ Պատրիարքի և Ս. Սինոդի անունից առաջնորդ սրբազն հորն ուղղված ջնորհավորական սրտագին խոսք ասաց Կելասի և պահսկոպոս՝ վեր հաներվ Տիրայր արքեպիսկոպոսի խաղաղասիրական և ժողովրդների միջև համերաշխությունն ամրապնդելու ջնորհակալ ջանքերը: Քույր Եկեղեցու հարգելի սրբազն հայրն իր խոսքի մեջ ընդօնեց մի քանի պատմական փաստեր, որոնք ցույց են տալիս երկու քույր Եկեղեցիների դարավոր եղբայրական, քրիստոնեական սերտ համագործակցությունը:

Բուլղարիայի կրոնական գործերի ներկայացուցիչ պր. Թողոր Արաշինն իր հակիրձ խոսքում վեր հանեց Տիրայր արքեպիսկոպոսի առաջնորդական պաշտոնավարության քանի հանդինգ տարիների խաղաղասիրական և ժողովրդների միջև բարեկամության համար գործադրած ջանքերը:

Ճաշկերույթի ավարտին ջնորհականական խոսքով հանդես եկավ գերազնորդ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը, որն իր խոսքի մեջ հատկանու շեշտեց ան մասին, որ ինք Վիտոշի փեշեր է եկել Արարատի ստորոտից և առաջին հսկ օրից զգացել եղբայրական բուլղար ժողովրդի անկեղծ ու

մարդասիրական վերաբերմունքը դեպի տարագիր հայ ժողովուրդը: Բուլղարիան այն երկիրն է, որտեղ հայերը անկաշկանդորեն և ապատ կերպով դավանում են իրենց քրիստոնական հավատքը և հաստատակամորեն պահպանում իրենց ազգային դեմքը:

Ճաշկերույթն ավարտվեց առաջնորդ սրբազն հոր գիհաբանական աղոթքով:

ՀՈՒՄԵՆԻ ՀԱՅՈՅ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ 150-ԱՄՅԱԿԸ

1985 թվականի հունիսի 30-ը հիշարժան օր դարձավ Բուլղարիայի Հումեն քաղաքի փոքրաթիվ հայ համայնքի համար: Այդ օրը տեղի հայությունը մեծ շուրջով տոնեց իրենց Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման 150-ամյակը:

Սույն տոնակատարությանը Բուլղարեստից մասնավորապես հրավիրված էր Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմական առաջնորդ գերազնորդ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը՝ գլխավորելու համար օրվա բացառիկ տոնականությունը:

Ս. Աստվածածին եկեղեցում, օրվա տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց առաջնորդ սրբազն հայրը և այսուհետև հայրենաշունչ մի քարոզով դիմեց ներկա հավատացյալ հայությանը՝ շեշտելով Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու անժխտելի դերը սկիտութիւն հայապահպանության, ինչպես նաև մեր լեզվի և հոգևոր ու մտավոր արժեքների պահպանության գործում:

Ս. պատարագի հոգեկամալ արարողությանը իր սրտագին մասնակցությունը բերեց Պուրկաչի հայոց եկեղեցու դպրաց դպար:

Եկեղեցական վարչության հրավերով 150-ամյա այս տոնակատարությանը հյուրաքար ներկա էին Բուլղարահայ թեմական խորհրդի անդամները և Բուլղարիայի հայոց եկեղեցիների եկեղեցական վարչության ատենապետները:

Եկեղեցական վարչության ատենապետ պր. Խաչատրյանը նաև առաջնորդ Ս. Սինոդի 1600 թվականին ուներ շուրջ 10—15 հայ ընտանիք, 1640-ին՝ 40—45, իսկ 1800-ական թվականներին՝ 550—600 հայեր, որոնք ունեցել են իրենց փայտաշեն եկեղեցին: Այս հայերը 1828—1829 թվականներին կող գնացին ռուս-թուրքական պատերազմին:

1830-ական թվականներին հավանաբար հայության թիվը ավելի մեծ է եղել Շումենում, քանի որ 1834 թվականին նրանց ուժերով կառուցվել է ներկայիս Ս. Աստվածածին եկեղեցին:

Եկեղեցական վարչության որոշումով վերջին հիմնովին վերանորոգվեց եկեղեցին:

Շումենի հայ գաղութը թեև իր քանակով փոքր, բայց միշտ իր համեստ լուսան է ներդնում հայ մշակույթի զարգացման գործում: Բազմաթիվ անգամներ տեղի երգի և պարի անսամբլը արժանացել է պետական պանական պարզմների:

Հակառակ այն բանի, որ Շումենի հայության թիվը աստիճանաբար պակասում է (հայերը զայտում են ավելի հայաշատ զայտութեր), այսուամենամին տեղում մնացած հայությունը, ներգրավված բուլղարակայ «Երևան» մշակութային կազմակերպության շրջանակներում, իր հայկական ակրութով, մասնակցում է իր երկրորդ հայենիքի՝ Բուլղարիայի տնտեսական և քաղաքական առաջնորդացին՝ հանուն խաղաղության և մարդկանց բարօրության՝ միշտ բարձր պահելով հայ անունը:

ԼՈՒՐԵՐ ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

Ժամանակներից ի վեր տեղական պայմանների բերումով՝ կիրակի օրերից բացի, սուրբ և անմահ պատարագ է մատուցվում նաև ուրբաթ օրերին, շաբաթվա հանգատի օր լինելու պատճառով:

Օգոստոսի 2-ին, ուրբաթ օրը, ս. պատարագի ընթացքում, հանդիսավոր կերպով ընթերցվեց Ամենայն Հայոց Վեհափոք Հայրապետի սրբատառ կոնդակը, որտեղ Նորին Սրբությունը արտոնում էր Խորենյան Պատարագի երգեցողությունը՝ որպես ընդունելի տարբերակ ցարդ նվիրագործված Կոմիտասան և Եկմայսն պատարագների շարքին: Ընդառաջենով Ամենայն Հայոց Հայրապետի կոնդակի հրահանգին, Բաղդադի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ Եկեղեցում դպրաց դասը խոր զգացումով կատարեց Խորենյան Պատարագի հետևալ հոգեհենն և սրտաշարժ շարականներն ու մեներգները՝

«Ամէն եւ ընդ հոգույդ քում...».

«Հայր մեր...».

«Միայն Սուլը, Միայն Տէր...».

«Ամէն Հայր Սուլը...».

«Տէր Ողորմեա...».

Իրաքի հայոց թեմի առաջնորդ Ավագ եպիսկոպոս Ասատուրյանը իր քարոզի մեջ հաստատեց, որ Վեհափոք Հայրապետի գահակալության երեսուներորդ տարեդարձի առթիվ Խորենյան Պատարագը ևս մի իրագործում է, որը ճոխացնում է Նորին Սրբության աստվածահաճող, Եկեղեցանվեր ու ազգօգուտ գործունեությունը: Նման ճաշակով բարձրորակ և խնամքով պատրանտված իրագործումները, ասում է սրբազն հայրը, մեր հերոսական Եկեղեցու կենտրոնակությունը ավելի են առողջացնում, նպաստում

նաև հայ ժողովորդի հոգուր մշակույթի առավել զարգացմանը և պայծառացմանը:

ԾՐՋԱՆԱՎԱՐՏ ՀԱՅ ԱԾԱԿԵՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՔԻ ԹԵՄՈՒՄ

Առաջնորդարանի նոր, հաճելի ձեռնարկումներից է՝ հյուրասիրությամբ պատվելը բարձրագույն երկրորդարանի, ինչպես նաև համալսարանի շրջանավարտ աշակերտներին և ուսանողներին:

Օգոստոսի 3-ին, շաբաթ օրը, երեկոյան, տեղի ունեցավ այդ գեղեցիկ ձեռնարկման երրորդ, երեկոյթը, որտեղ ներկա էին՝ առաջնորդ սրբազն հայրը, Ավգային Կեդրոնական Վահրապետ անդամները, առաջնորդարանին առընթեր կազմակերպությունների վարիչ մարմինները և համայնքի մեջ գործող Միությունների ներկայացուցիչները: Իր ուղերձի մեջ սրբազն հայրը հրավիրեց երիտասարդներին հայավայել ընթացքով մտնել կյանքի ասպարեզ, և ապա ավելացրեց. «Դուք, սիրելի աշակերտներ և աշակերտուիններ, այս ամառ շրջանավարտ եղաք՝ հաջողությամբ ավարտելով ձեր դասընթացները: Ծրջանավարտ ըլլալ՝ կնշանակե որոշ շոշան մը բոլորել, սկսելու համար նոր հանգուվան մը նոր կարելի հություններով, սպասումներով, երազանքներով ու խելաններով: Չեզ կմաղթենք աննկուն կամք և նորանոր ներջնչանքներ:

Ընդհանրապես մարդ եակը իր կյանքի ընթացքին որոշ ժամանակ մը դպրոց հաճախելե վերջ կրադրի աշակերտ ըլլալն, բայց իր մեջ միշտ վառ պետք է պահե աշակերտելու տեսչը: Իհարկէ կարելի է շատ մը արժեքներու աշակերտի, բայց ես կփափաքիմ ձեսի հիշեցնել, թե դուք որպես հայ երիտա-

սարդներ ձեր կյանքի տևողության պարտիք աշակերտի բոլորի դաստիարակ մայր հանդիսացո՞՝ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցի, Հայոց հերոսական պատմության, հայրենի հոլի հրամայականին, հայկական պահնդությանց և մեր տոհմիկ սովորություններուն: Քանի տևապես աշակերտեղով մեր մշակութային իրագործումներուն ու արժեքներուն, դուք կապ հաստատած կը լլաք ձեր արմատներուն հետ՝ այսինքն հայ ժողովուրդի ցարդ ստեղծած դարավոր ժառանգությանց հետ և պորացած այս սնունդով պիտի կարողանաք զստահ քայլերով հառաջ ընթանալ ու կյանքի կոչել, իրագործել ապագայի ոլորտին մեջ գտնվող ձեր ցանկությունները:

Այսուհետև սրբազն հայրը հյուրասիրության հուշանվերներ հանձնեց շրջանավարտներին, իսկ մի քանիսին, որոնք բացառիկ հաջողությունների էին հասել ամավերջի:

քննությունների ժամանակ, տվեց Մայր Առողի հրատարակած «Արարատ» ալբոմները: Այս տարի Բաղդադի շրջանավարտ հայ աշակերտների հունձքը առատ էր՝

Բարձրագույն նախակրթարանի շրջանավարտներ — 66

Համալսարանի զանազան ճյուղերի շրջանավարտներ — 27

Ինստիտուտի շրջանավարտներ — 4

Հիշատակության են արժանի երկու շրջանավարտների ձեռք բերած բացառիկ և արտակարգ հաջողությունները. օրիորդ Ռիթա Լևոնի Մոմձյան (Բորսա), որը Իրաքի բոլոր բարձրագույն երկրորդական շրջանավարտների մեջ հանդիսացավ երկրորդը, և Նիկոլ Խաչիկի Խաչատրյանը, որը ինստիտուտի երկամյա շրջանը քաջալավ ավարտեց՝ արժանանալով տնօրենության շնորհավորագիր գնահատանքին:

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԸ ԼՈՆԴՈՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Հայ եկեղեցական և ապագային ամենաժողովրդական ու նշանավոր տոններից մեկն է Թարգմանչաց տոնը: Արդեն ավանդություն դարձած սովորությամբ այդ տոնը յուրահատուկ շուրջով և հանդիսավորությամբ է նշվում նաև Լոնդոնի հայոց թեմում՝ որպես հայ մշակույթի օր:

Թարգմանչաց տոնի առթիվ սեպտեմբերի 13-ին, կիրակի օրը, Լոնդոնի առաջնորդանիստ Ս. Պետրոս եկեղեցում եպիսկոպոսական հանդիսավոր և պատարագ մատուցեց Մայր Աթոռից հյուրաբար Լոնդոն ժամանած Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պուապայանը:

«Հայր մեր»-ից առաջ «Նմանեալ Մովսիսի տէր վարդապետ, բերելով զգիր օրինաց ի Հայաստան աշխարհս, որով լուսաւորեցան ազգ որդոց Թորգոնայ» (Տարական) բնարանով ոգեջունչ քարոզ արտասանեց սրբազն հայրը՝ վեր հանելով հայերեն գրերի գյուտի և թարգմանիչ վարդապետների կենսական դերը, որով հայ ժողովուրդը կարողացվ դիմագրավել անցյալի բոլոր փորձություններին: Եվ որպեսզի մեր ժողովուրդը այսօր նույնպես կարողանա հաղթահարել ձուլման փորձությունը, անհրաժեշտ է, որ

ամեն մի հայ ընտանիքում միշտ վառ մնան Ս. Մեսրոպի անմար ջահը, մեր պապենական հավատն ու հայենի ավանդույթները:

Թարգմանչաց տոնի առթիվ Լոնդոնի Ս. Սարգիս եկեղեցում եպիսկոպոսական հանդիսավոր և պատարագ մատուցեց և քարոզեց Լոնդոնի հայոց թեմի առաջնորդ Տ. Եղիշե եպս. Կիվիրյանը:

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, Լոնդոնի «Գևորգ Թաթիայան» կիրակնօրյա վարժարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ գրական-գեղարվեստական հանդես՝ նվիրված Թարգմանչաց տոնին՝ նախագահությամբ առաջնորդ սրբազնը:

Թարգմանչաց տոնի առթիվ կեկուցումով հանդես կավ Տ. Շնորհք արեղա Բաղդասարյանը:

Հանդեսի ընթացքում գործադրվեց գեղարվեստական ծրագիր՝ վարժարանի սաների և համայնքի մի ջարք արվեստագետների կողմից:

Հանդիսությունը օրինության խոսքով փակեց առաջնորդ Տ. Եղիշե եպս. Կիվիրյանը:

ԸՆՈՐՀՔ ԱԲԵՂԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՐԱՋՆՈՐԴԻ ՀՈՎՎԱԿԱՆ ԱՅՑԸ ԱԽԱԼԾԻՆԱ ԵՎ ԱԽԱԼՔԱԼԱՔ

Նորին Սուլը Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի հաճությամբ, Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գևորգ Եպիսկոպոս Սերայդարյանը օգոստոսի 29-ից սեպտեմբերի 2-ը թեմական գործերով գործուղվում է Ախալցխա և Ախալքալաք:

Օգոստոսի 29-ին, իինգաշաբթի.—Ուշ երեկոյան առաջնորդ սրբազնութեալիսից ժամանում է Ախալցխա, որի սահմանի վրա դիմավորելու էին եկեղեց Ախալցխայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Համակուն քահանա Սաղոյանը, Ախալքալաքի Ս. Խաչը եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Համակուն քահանա Սաղոյանը և համայնքի ներկայացուցիչները:

Օգոստոսի 30-ին, ուրբաթ.—Ժամը 12-ին գերաշնորհ Գևորգ Եպիսկոպոս Սերայդարյանը, Ախալցխայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Ռուբեն քահանա Սաղոյանի ուղեկցությամբ, այցելում է Ախալցխայի Գործկոմ, ուր մեծահարգ հյուրին ընդունում է Գործկոմի փոխնախագահ տիար Կարպես Գելաշվիլին: Առաջնորդ սրբազնությանցում է Ամենայն Հայոց կաթողիկոսի բարի մայթանքները: Գևորգ սրբազնության շնորհակալություն է հայտնում տիար Գելաշվիլուն այն բանի համար, որ նրա օժանդակությամբ այս տարի Ախալցխայի Սուլը Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շրջափակում կառուցվել է հովվատուն:

Չրուցի պահին նրանք անդրադառնում են Հայ և Վրաց եկեղեցիների շերմ հարաբերություններին, որոնք դարերի խորքից են գալիս և Տ. Տ. Վազգեն Ա ու Տ. Տ. Խիա Բ կաթողիկոսների մշտական ջանքերի շնորհիվ նոր որակ են ստացել այսօտ: Խոսկում է նաև այս մասին, որ երկու եկեղեցիները իրենց անընդմեջ աշխատանքներով նպաստում են աշխարհի խաղաղության պահպանան մեծ գործին: Վերջում սրբազն առաջնորդը, ուղեկցությամբ տիար Կարպես Գելաշվիլու, այցելում է Ախալցխայի նորաբաց Ս. Աստվածածին Վրաց եկեղեցի: Հայոց Եպիսկոպոսին դիմավորում է Տ. Տ. Ստեփան քահանան: Կատարվում է համատեղ աղոթք: Գևորգ Եպիսկոպոսը շնորհավորում է Վրաց ռահանային և հավատացյալներին նորաբաց եկեղեցու առթիվ, ապա Տ. Տ. Ստեփան քահանայի միջոցով իր ողջուններն է փոխնացում Վրաց թեմակալ առաջնորդ գերաշնորհ Անանիա Եպիսկոպոսին: Նույն օրը Գևորգ սրբազնությանում է Ախալցխայի նորակառուցներին, ապա մեկնում Վարձիա՝

ապամական Քարանձավների նամակիրը տեսնելու:

ԳԵՎՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԱԽԱԼՔԱԼԱՔ

Օգոստոսի 31-ին, շաբթի.—Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գևորգ Եպիսկոպոս Սերայդարյանը, ուղեկցությամբ Ախալքալաքի հայոց հոգևոր հովիվ Տ. Համակուն քահանա Սաղոյանի Ախալցխայի մեկնում է Ախալքալաք՝ թեմական գործերով:

Առաջնորդ սրբազնին դիմավորում և ընդունում է Ախալքալաքի Գործկոմի նախագահի տեղակալ տիկ. Թամարա Լազարաշվիլին: Խոսակցությանը ներկա էր նաև քաղաքի Գործկոմի նախագահ տիար Մեհրուժան Գոգորյանը: Վրաստանի հայոց հոգևոր առաջնորդը սրբազնությամբ առաջական անցյալին, նաև արդի աշխարհը հուկող ամենակենսական հարցին՝ խաղաղությանը: Սրբազնը առանձնապես շշշում է, որ Հայ եկեղեցին, քուր Եկեղեցների հետ միասին, մեծ աշխատանք է կատարում խաղաղության պահպանան գործում:

Զերմ Վրուցից հետո, փոխնախագահ տիկ. Լազարաշվիլին հյուրին առաջնորդում է տեղի գավառագիտական թանգարան, որտեղ յանում են թանգարանի տնօրին տիար Արտեն Նարապետյանի բացատրությունները, Ախալքալաքի անցյալի շրջանի պատմությունից մինչև արդի նորագույն նվաճումները:

Վերջում սրբազն առաջնորդը շնորհակալություն է հայտնում թանգարանի տնօրինին՝ բացատրությունների համար, և իր խոսքի մեջ վեր հանում հատկապես վերջին շրջանի հայ և վրաց ժողովուրդների մշակութային և տնտեսական կյանքում կատարված աննախընթաց նվաճումները:

Թանգարան այցելությունից հետո, տիկ. Լազարաշվիլին ծանոթացնում է հյուրին քաղաքի տեսարժան վայրերին: Առ ի տես Ախալքալաքում կառուցվող 3000 բանվորություն ընդգրկող ճոպանուղու գործարանի շինության և Թբիլիսի—Ախալքալաք առաջին երկաթգիծը անցկացնելուն, սրբազն հայոն իր խորին գործունակությունը և նորանոր հաջողություններն է մայթում քաղաքացիներին և նրանց դեկալարությանը:

Հետ միջօրեկ տիկ. Լազարաշվիլին Գործ-

կոմի անունից, ի պատիվ բարձրաստիճան հյուրի, կազմակերպում է ճաշկերույթ, մանկավարժ <արությունյանների հարկի տակ:

Ճաշից հետո S. Ըմափոն քահանան կազմակերպում է պտույտ դեպի Փարվանա լիճ, Գանձայի Ս. Կարապետ եկեղեցի և Վահան Տերյանի տուն-թանգարան:

Երեկոյան սրբազն հայրը «Հրաշափառ»-ի հնչյունների ներքո, թափորով մուտք է գործում Ախալքալաքի հայոց Ս. Խաչ եկեղեցի՝ ժամերգության: Ժամերգությունից հետո առաջնորդ սրբազնն իր հայրական հորդորներն ու օրինություններն է տալիս տեղի հավատացյալ համայնքին:

Նույն օրը, երեկոյան, սրբազննը, Ախալքայիս մեկնելուց առաջ, իր գործունակությունն ու շնորհակալությունն է հայտնում տիկ. Լազարաշլիյուն և տեղի պաշտոնական մյուս մարմիններին, որոնք բայց սրտով և անխառն զգացմունքներով ընդունեցին և հյուրապիրեցին Ամենայն <այց կաթողիկոսի ներկայացուցչին:

Սրբազննը, S. Ըմափոն քահանայի ուղեկցությամբ, մեկնում է Ախալքայիս:

ՄՐԲԱՉԱՆԸ ԱԽԱԼՔԻՆԱՅՈՒՄ

Սեպտեմբերի 1-ին, կիրակի.—Ախալքայիս Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում ընդունում են սրբազն առաջնորդին «Հրաշափառ»-ի հնչյուններով: Սկսվում է առաջնորդ ժամերգությունը, ապա կից պատարագ: Պատարագում է գերաշնորհ Գևորգ սրբազնը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում հավուր պատշաճի:

Ս. պատարագին ներկա էր նաև Ախալ-

քայայի Գործկոմի փոխնախագահ տիար Կարպետ Գելաշվիլին:

Ս. պատարագից հետո Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գործադիր մարմնի նախագահ տիար Սանուկ Մինասյանը, ի պատիվ առաջնորդի, կազմակերպում է ճաշկերույթ:

Ժամը 16-ին Գևորգ սրբազննը, S. Ռուբեն, S. Ըմափոն քահանաների ու դպիրների ուղեկցությամբ, մեկնում է Ախալքայի կենտրոնական գերեզմանատուն, ուր օրինում է Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու շիրիմի վրա նոր կառուցված մատուռը և կատարում հոգեհանգիստ, ժողովրդի ներկայությամբ:

Սրբողությունից հետո սրբազն հայրը խոսում է դամբանական:

Ժամը 17-ին սրբազննը քահանաների ուղեկցությամբ մեկնում է Ծուղրութ գյուղ, որի հին գերեզմանոցում հոգեհանգստյան պաշտոն է կատարում Աստրախանի հայոց թեմի նախկին առաջնորդ Ս. Միհթար Եպիսկոպոս Տեր-Սկրտչյանի շիրիմի վրա: Ավելի ուշ սրբազնն այցելում է գյուղում գտնվող 974 թվականի նշանավոր Ավետարանին ի տես և ի համբուր:

Սեպտեմբերի 2-ին, երկուշաբթի.—Առավոտայան ժամը 10-ին սրբազն հորը բարի ձանապարհ են մաղթում Ս. Ռուբեն քին. Սաղոյանը, S. Ըմափոն քին. Սաղոյանը, տեղի հայ եկեղեցու գործադիր մարմնի նախագահ տիար Սանուկ Մինասյանը, վարչության անդամները և հավատացյալ ժողովուրդը:

Ժամը 15-ին սրբազն հայրը, իր հովվական այցելությունը կատարելուց հետո, լավագույն տպագրություններով վերադառնում է Թբիլիսի, իր աշխատատեղին:

ՈՍԿԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼԻՎԱԶՅԱՆԻ ԱՅՑԸ ԹԲԻԼԻՍԻ

Նորին Սուլբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ամենայն <այց կաթողիկոսի արտոնությամբ և Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գևորգ Եպիսկոպոս Սերայդարյանի հրավերով սույն թվականի սեպտեմբերի 20-ին, ուրբաթ օրը, Թբիլիսի ժամանեց <ուսաստանի հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Ուկան Եպիսկոպոս Գալիվազյանը:

Սեպտեմբերի 21-ին, շաբաթ օրը, ժամը 17-ին, խուռներամ ժողովրդի ներկայությամբ գերաշնորհ Ուկան Եպիսկոպոսը «Հրաշափառ»-ով առաջնորդվեց Թբիլիսիի Ս. Էջմիածին եկեղեցի, ոյսեղ և կատարվեց

Երեկոյան ժամերգություն՝ թեմակալ առաջնորդի և եկեղեցական դասի մասնակցությամբ:

Սեպտեմբերի 22-ին, կիրակի օրը, ժամը 11-ին, Թբիլիսիի Ս. Գևորգ Մայր եկեղեցում կատարվեց հանդիսավոր և պատարագ: Պատարագեց և հավուր պատշաճի քարոզ խոսեց գերաշնորհ Տ. Ուկան Եպիսկոպոս Գալիվազյանը:

Սեպտեմբերի 23-ին, երկուշաբթի օրը, ժամը 12-ին, գերաշնորհ Տ. Ուկան Եպիսկոպոս Գալիվազյանը, Գևորգ սրբազնի և Տ. <ուղաննես ավագ քահանայի ուղեկցությամբ, այցելություն տվեց <ամայն Վրաստանի



Տ. Ուկան եպիսկոպոս Գալիքաքյանը Թբիլիսի Ս. Գևորգ Մայր եկեղեցում պատարագի պահին

Պատրիարք-Կաթողիկոս Ելիա Բ-ին: Տեղի ունեցավ ջերմ զրույց:

Մեպտեմբերի 24-ին գերաշնորհ Ուկան եպիսկոպոսը հրաժեշտ տվեց հյուրընկալ Վրաստանին և մեկնեց Մայր Աթոռ:

Մեպտեմբերի 20—23-ին Տ. Ուկան եպիսկոպոս Գալիքաքյանի այցը Թբիլիսի մեծ տպափորություն թողեց տեղի հայ հավատացյալների վրա, որոնք այդ ընթացքում ջերմ խանդավառություն ապրեցին արտասահմանի հայության հայապահպանմամբ և նրանց կատարած խաղաղասիրական աշխատանք-

ներով ու հոգևոր առաջընթացով: Նրանք գնահատեցին Հայ Եկեղեցու սպասավորների կատարած աշխատանքներն ու փառարանեցին Վեհափառ Վազգեն Ա կաթողիկոսին՝ իրեն ռահվիրա այդ սպասավորների:

Տ. Ուկան եպիսկոպոսը իր այցելության ժամանակամիջոցում եղավ Թբիլիսի մի շարք թանգարաններում, մի շարք հայկական եկեղեցիներում, այցելեց հայոց Խոջիվանքի և վրացական Մթացմինդայի պանթեոններ ու պատմական վանքեր՝ Զվարի, Մցիւթա և Ալբուր:

ԿԿԱՌՈՒԹՎՎԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՖԼՈՐԻԴԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԿՈՂՄԵ

Ուրախությամբ կտեղեկացնենք որ կիրակի օգոստոս 11-ին (1985), համայնքին բացառիկ Ծխական ժողովը միաձայնությամբ թե կառուցման ի նպաստ, և թե նախատեսված ծախքերուն ի նպաստ:


Ժողովի ընթացքին մեծ խանդավառություն և նորանոր հանձնառություն կտևնը-վեր բոլորին արտահայտությանց մեջ, որոնք օրինականացնեցին ներկայացված ծրագիրը, և նախատեսված ուր հարյուր հիտուն հայության մասնակի ընդհանուր ծախսը:

Ժողովականները հոտնկայս հետևեցան հոգևոր հովիվի արտասանած աղոթքին, որ-

արդյունք տալով՝ ժողովը քվեարկեց միաձայնությամբ թե կառուցման ի նպաստ, և թե նախատեսված ծախքերուն ի նպաստ:

Ժողովի ընթացքին մեծ խանդավառություն և նորանոր հանձնառություն կտևնը-վեր բոլորին արտահայտությանց մեջ, որոնք օրինականացնեցին ներկայացված ծրագիրը, և նախատեսված ուր հարյուր հիտուն հայության մասնակի ընդհանուր ծախսը:

Խանդավառ չափերով լսվեցավ նաև այն



ԱՄ-Ի Հարավային Ֆլորիտայի Հայաստանյաց նորակառուց եկեղեցու և Մշակութային Սրահի նախագածը

մե ետք Ծխական Խորիուրդի ատենապետը բացված հայութարեց օրինական մեծամասնությամբ գոյացած ժողովը: Օրակարգի միակ հարցը նոր շենքերու նախագիծերու քննությունը ըլլալով, իսկուս բեմ հրավիրվեցան Ծինության Հանձնախումբի անդամներ՝ ներկայացնելու համար հատակագծերն ու մանրամասնությունները:

Ներկաներ խանդավառությամբ և հետաքրքրությամբ ուղղեցին շարք մը հարցումներ, որոնք պատասխանվեցան գոհացուցիչ կերպով: Ապա քննվեցավ շինարարական ձեռնարկին նախատեսված ծախսն ու ֆինանսական դրույթունը: Այս ևս գոհացուցիչ

մեծագույնար նվիրատվվաթյան մասին (200,000 տոլար): Կոր խոստացած են ընել մեծանուն բարերարներ տեր և տիկին Էտվորտ և Հեղեն Մարտիկյաններ՝ նոր կառուցվելիք Մշակութային Սրահին ի նպաստ: Սրահը, պիտի կոչվի բարերարներու անունով:

Այժմ իրականություն է որ Հարավային Ֆլորիտայի առաջին Հայաստանյաց Ս. Եկեղեցին և Սրահը միասին պիտի կառուցվին շատ մոտիկ ապագային, թերևս նույնիսկ մինչև հառաջիկա Զատիկ:

ԶԱՎԵՆ ՔԱՀԱՆԱ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑՈՒՄ ՄԵԼՊՈՒՌՈՒՄԻ ԱԿԻՆՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՐՅԱ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Տարվուս հոկտ. 20-ին ցնծության մեջ էր մելպուռնահայ գաղութը. այդ օր բացումը պիտի կատարվեր Ակինյան ազգային միօրյա վարժարանի:

Օրվա հանդիսությունները սկսան եկեղեցական արարողությամբ: Օրվա հանդիսավոր ս. և անմահ պատարագը մատուց, Ավատրախո և Նոր Ձերանտայի առաջնորդ, գերօ. Տ. Աղան ս. եպս. Պալիովան, իր կողքին ունենալով Մելպուռնի հովիվ արժ. Տ. Ներսես թիև. Գրովանն ու սարկավագաց դասը:

«Հայր մեր»-ի պահուն պատարագիչ ս. հայրը ոգեշունչ քարոզ մը խոսեցավ, ուր և ներկա հավատացելոց փոխանցեց Ազգի Վեհափառ Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի հայրապետական ողջունն ու օրինություննը:

Ս. պատարագին ներկա եղան պետական դեմքեր ու եկեղեցական ներկայացուցիչներ քուր Եկեղեցիներու. ինչպես նաև հայ համայնքի ներկայացուցիչներ ու խուռներամ հայ հավատացյալներ:

Ս. պատարագի ավարտին, եկեղեցական ու աշխարհական թափորը առաջնորդ ս. եղու գիսավորությամբ հառաջացավ դեախ դարոցի շենքին նախամուտը, ուր տեղի ունեցավ եկեղեցական արարողություն: Տող. Վիգեն Ավետյան ի լուր ժողովրդյան ընթերցեց Ամենայն Հայոց կաթողիկոսի սրբաւառ կոնդակը. կոնդակի ընթերցումի ավարտին, առաջնորդ ս. հայրը կոնդակը հանձնեց դպրոցի հիմնադիր-տնօրեն, տիկ. Սիրապիի Տ. Ավետիսյանին: Ազգային ու դպրոցի բարերար տիար Հարություն Ակինյանի բացակայության պատճառով, ժապավենի հասուն կատարեց Նիկողոս Կյուզանիանը, որ երկար տարիներե ի վեր դպրոցի հոգաբարձու-ատենապետն է ու մղիչ ուժերեն մին այս գեղեցիկ ծրագրի իրագործման:

Ասա թափորը հառաջացավ դպրոցին ներս, ուր ս. եղու խոսքեն ետք, տիար ձորձ Կայծքար անզերեն լեզվով խոսք առնելով, Կայծքար և Ավետյան ընտանիքներու գրիուսակությունը հայտնեց որ դպրոցի երազը իրականություն դարձավ ու իրենց ծնողաց Կարապետ և Վիքորիա Կայծքարներու հիշատակին նվիրված ցուցատախտակի վարագույրի բացումը կատարեց: Տեղին է հիշել որ Կայծքար և Ավետյան ընդունիքները 20 (քսան) հազար տոլարի նվիրատվությամբ մասնակից դարձան դպրոցի շինարարական աշխատանքին:

Բացման արարողութենեն ետք, ներկաներ շրջագայեցան դասարաններեն ներա, մինչ վարժարանի աշակերտուները Մագիստր Կյուզելյանի ղեկավարությամբ, հայերեն երգերու փուլօնով մը հանդես եկան:

Եկեղեցվո սրահը լեցուն էր երբ պաշտոնական անձնավորություններ մուտք գործեցին ուր և տեղի ունեցավ մատաղի օրինությունն ու ապա՝ սպասարկությունը:

Օրվա հանդիսավար ու Եկեղեցվո վարչական Աբրահամ Հարությունյան թեմ հրավիրեց Եկեղեցվո վարչության ատենապետ տիար Պերճ Թերզյանը, որ անզերեն լեզվով բարի գալուստ մաղթեց բոլորին. ապա հաջորդաբար խոսքով հանդես եկան Գամազըրուելի քաղաքայետը, փոքրամասնությանց նախարարի ներկայացուցիչը, տիար Նուպար Շահինյան—փոխ ատենապետ հոգաբարձու մարմնի, երեսփոխաններ Սիրիլ Գենետի և Հելեն Մայլըը: Տիկ.

Սիրարփի Տ. Ավետիսյանի հայաջունչ խոսքը մեծ խանդավառություն ստեղծեց ներկաներուն մեջ:

Եպրափակիչ խոսքը կատարեց առաջնորդ ս. հայրը, կրկին անգամ ներկաներուն փոխանցելով Վեհափառ Հայրապետի ողջույնն ու օրինությունը, Հայրենի պետության ու ժողովուրդի սիրալիր բարևները: Իր խոսքին մեջ հայտնեց թե ՀԲԸՄ-ի ցկյանս նախագահ մեծահարգ տիար Ալեք Մանուկյան 15 (տասնհինգ) հազար ամերիկյան տողարի նվիրատվություն մը կկատարե դպրոցին: Այս անակնկալ ավետիսը խանդավառությունը հասցուց իր զենիքին, ու ներկաներ երկարատև ծափերով ու բացականչություններով իրենց գոհունակությունը հայտնեցին ՀԲԸՄ-ի մեծ ընտանիքին ու անոր ցկյանս նախագահին: Այս առիթով եղան զանազան սրտաբուխ նվիրատվություններ, ի մի բերելով շոշափելի կոկիկ գումար մը: Մըրբազան հոր «Պահպանիչ»-ով իր ավարտին հասավ հիշատակելի ու անմոռանալի օրը:

1986-ի ուսումնական տարեշրջանը տեղի պիտի ունենա Ակինյան ազգային փարմարանի շենքին մեջ, Մելպուտնի Ս. Աստվածածին Հայաստանից Սոաքելական Եկեղեցին կողքին ու անոր հովանավորության ներքեւ:

ԴԻՎԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ԱՎԱՏՐԱԼԻՌ ԵՎ ՆՈՐ ԶԵԼԱՆՏԱՅԻ

Հոկտ. 1985

